ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 14

«Հազարամյակի մարտահրավեր» հիմնադրամ - Հայաստան» ՊՈԱԿ-ի
Կառավարման խորհրդի 2007թ. մայիսի 15-ին ժամը 15.00-ին
կայացած հերթական նիստի

Նիստը նախագահում էր.

«Հազարամյակի մարտահրավեր» հիմնադրամ - Հայաստան» ՊՈԱԿ-ի Կառավարման խորհրդի նախագահ, ՀՀ Վարչապետ Սերժ Սարգսյանը

Մասնակցում էին՝
Կառավարման խորհրդի անդամներ.

Վահրամ Ներսիսյանցը	ՀՀ Նախագահի տնտեսական հարցերով գլխավոր խորհրդական
Վարդան Խաչատրյանը	ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարար
Դավիթ Լոքյանը	ՀՀ գյուղատնտեսության նախարար
Անդրանիկ Մանուկյանը	ՀՀ տրանսպորտի և կապի նախարար
Նազելի Վարդանյանը	«Հայաստանի անտառներ» բնապահպանական ՀԿ նախագահ
Կարեն Նազարյանը	«Հայաստանի միջեկեղեցական բարեգործական կլոր սեղան» հիմնադրամի նախագահ
Տոնական Ղազարյանը	«Շենիկ» Ջրօգտագործողների ընկերությունների միության նախագահ
Վանիկ Սողոմոնյանը	Ֆերմերների ազգային միավորում ՀԿ-ի նախագահ
Վարդան Համբարձումյանը	«Գյուղատնտեսական ասոցիացիաների ֆեդերացիա» իրավաբանական անձանց միության նախագահ

Բացակայում էր.

Հովիկ Աբրահամյանը	ՀՀ տարածքային կառավարման նախարար

Նիստին հրավիրված էին.

Անդրանիկ Անդրեասյանը	ՀՀ տարածքային կառավարման նախարարության ջրային տնտեսության պետական կոմիտեի նախագահ
Դավիթ Ավետիսյանը	ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարի տեղակալ

Նիստին մասնակցում էին նաև.

Արա Հովսեփյանը	«Հազարամյակի մարտահրավեր» հիմնադրամ - Հայաստան» ՊՈԱԿ-ի գլխավոր գործադիր տնօրեն

Գուզասսա Գազարյանը	«Հազարամյակի մարտահրավեր» որսսադրաս - Հայաստան» ՊՈԱԿ-ի իրավախորհրդատու, Կառավարման Խորհրդի քարտուղար
Ալեքս Ռասինը	Կառավարման Խորհրդի դիտորդ, Հայաստանում ԱՄՆ «Հազարամյակի մարտահրավեր» կորպորացիայի գրասենյակի տնօրեն
Էդիթ Պետրոսյանը	Հայաստանում ԱՄՆ «Հազարամյակի մարտահրավեր» կորպորացիայի գրասենյակի օգնական
Սիմոն Ղոնախչյանը	ՀՀ կառավարության աշխատակազմի տնտեսագիտական վարչության պետ
Հովհաննես Սահակյանը	ՀՀ կառավարության աշխատակազմի տնտեսագիտական վարչության գլխավոր մասնագետ,
Մերի Հարությունյանը	ՀՀ կառավարության աշխատակազմի տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի վարչության պետ

Նիստի օրակարգում ընդգրկված էին հետևյալ հարցերը.

1. «Բնապահպանական և սոցիալական գնահատում և վերահսկողություն« խորհրդատվական ծառայությունների ձեռք բերման մրցույթին ներկայացված տեխնիկական առաջարկությունների գնահատման արդյունքների քննարկում և հաստատում:
2. «Ոռոգման 6 /վեց/ ինքնահոս համակարգերի կառուցման նպատակով վերջնական նախագծման և կառուցման վերահսկողություն» խորհրդատվական ծառայությունների ձեռք բերման տեխնիկական առաջարկների գնահատման արդյունքների քննարկում և հաստատում:
3. «Ոռոգման 8 /ութ/ ինքնահոս համակարգերի նախագծում և շինարարության վերահսկում» խորհրդատվական ծառայությունների մատուցման մրցույթի արդյունքների /կարճ ցուցակի/ և առաջարկի ներկայացման հրավերի քննարկում և հաստատում:
4. «Ոռոգման կառավարման կազմակերպությունների կառուցվածքային ամրապնդում» խորհրդատվական ծառայության նախաորակավորման մրցույթի արդյունքների /կարճ ցուցակի/ և առաջարկի ներկայացման հրավերի քննարկում և հաստատում:
5. «Ավտոմոբիլային ճանապարհների ընթացիկ և ձմեռային պահպանման կատարման վրա հիմնված գործող համակարգի վերանայում և բարելավում» խորհրդատվական ծառայությունների ձեռք բերման մրցույթի տեխնիկական առաջարկների գնահատման արդյունքների քննարկում և հաստատում:
6. Գնումների Պլանի քննարկում և հաստատում:
7. «ՀՄՀ-Հայաստան» ՊՈԱԿ-ի կառավարման խորհրդի 2007թ. մարտի 16-ի նիստի (Արձանագրություն N12) 1-ին հարցի բ) ենթակետի /Լինսի ծրագրի հետ կապված/ հանձնարարականի կատարման արդյունքների քննարկում:

Նիստի ընթացքում.

Նախքան օրակարգի հարցերի քննարկմանն անցնելը ԿԽ Նախագահը խոսքը փոխանցեց Կառավարման Խորհրդի դիտորդ, Հայաստանում ԱՄՆ «Հազարամյակի մարտահրավեր» կորպորացիայի գրասենյակի տնօրեն պարոն Ալեքս Ռասինին:

ընտրությունները ավարտր առթիվ և հայտնեց, որ այդ ընտրությունների հետ կապված Հայաստանի Հանրապետության վերաբերյալ որոշումն ԱՄՆ «Հազարամյակի մարտահրավեր» Կորպորացիայի Գործադիր Խորհուրդը դեռևս չի կայացրել: Որոշումը Վաշինգտոնում կայացվելուց հետո անմիջապես կներկայացվի ՀՀ կառավարությանը:

Հաշվի առնելով միջազգային և տեղական դիտորդների ընտրությունների վերաբերյալ գնահատականները՝ ԿԽ Նախագահը տարօրինակ համարեց պրն. Ա.Ռասինի ելույթը, բայց այդուհանդերձ առաջարկվեց այն ընդունել որպես ի գիտություն:

Օրակարգի 1-ին հարցի վերաբերյալ միաձայն որոշվեց՝ հաստատել «Բնապահպանական և սոցիալական գնահատում և վերահսկողություն» խորհրդատվական ծառայությունների ձեռք բերման մրցույթին ներկայացված տեխնիկական առաջարկությունների գնահատման արդյունքները:

Օրակարգի 2-րդ հարցի վերաբերյալ միաձայն որոշվեց՝ հաստատել «Ռոգման 6 /վեց/ ինքնահոս համակարգերի կառուցման նպատակով վերջնական նախագծման և կառուցման վերահսկողություն» խորհրդատվական ծառայությունների ձեռք բերման տեխնիկական առաջարկների գնահատման արդյունքները:

Օրակարգի 3-րդ հարցի վերաբերյալ միաձայն որոշվեց՝ հաստատել «Ռոգման 8 /ութ/ ինքնահոս համակարգերի նախագծում և շինարարության վերահսկում» խորհրդատվական ծառայությունների մատուցման մրցույթի արդյունքները /կարճ ցուցակը/ և առաջարկի ներկայացման հրավերը:

Օրակարգի 4-րդ հարցի վերաբերյալ միաձայն որոշվեց՝ հաստատել «Ռոգման կառավարման կազմակերպությունների կառուցվածքային ամրապնդում» խորհրդատվական ծառայության նախարարակավորման մրցույթի արդյունքները /կարճ ցուցակը/ և առաջարկի ներկայացման հրավերը:

Օրակարգի 5-րդ հարցի վերաբերյալ միաձայն որոշվեց՝ հաստատել «Ավտոմոբիլային ճանապարհների ընթացիկ և ձմեռային պահպանման կատարման վրա հիմնված գործող համակարգի վերանայում և բարելավում» խորհրդատվական ծառայությունների ձեռք բերման մրցույթի տեխնիկական առաջարկների գնահատման արդյունքները:

Օրակարգի 6-րդ հարցի վերաբերյալ միաձայն որոշվեց՝ հաստատելԳնումների Պլանը:

Օրակարգի 7-րդ հարցի վերաբերյալ որոշվեց՝ ընդունել ի գիտություն «ՀՄՀ-Հայաստան» ՊՈԱԿ-ի գլխավոր գործադիր տնօրեն Ա. Հովսեփյանի տեղեկատվությունը՝ «ՀՄՀ-Հայաստան» ՊՈԱԿ-ի կառավարման խորհրդի 2007թ. մարտի 16-ի նիստի (Արձանագրություն N12) 1-ին հարցի բ) ենթակետի /Լինսի ծրագրի հետ կապված/ հանձնարարականի կատարման արդյունքների մասին և հանձնարարվեց լրատվական միջոցներով տեղեկացնել հանրությանը, որ «ՀՄՀ-Հայաստան» և Լինսի ծրագրերում տեղ գտած կրկնությունների հարցը կարգավորվել է:

Օրակարգի հարցերի սպառումից հետո նիստն ավարտվեց:

«ՀԱԶԱՐԱՄՅԱԿԻ ՄԱՐՏԱՀՐԱՎԵՐ» ՀԻՄՆԱԴՐԱՄ-ՀԱՅԱՍՏԱՆ»
ՊՈԱԿ-Ի ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ,
ՀՀ ՎԱՐՉԱՊԵՏ Ս. ՍԱՐԳՍՅԱՆ